ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«12» դեկտեմբեր 2022թ. № 836-L

ՀՐԱՄԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մաքսային ծառայության մասին» օրենքի 8.3-րդ հոդվածի 8-րդ մասը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգը, ինչպես նաև հարցազրույցի հանձնաժողովի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8/12/2022

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված 1
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2022 թվականի օգոստոսի 12-ի № 836-Լ հրամանի

ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող հարցազրույցի (այսուհետ՝ հարցազրույց) կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Հարցազրույցի անցկացման նպատակով Կոմիտեի ղեկավարի կողմից ձևավորվում է առնվազն 5 անդամից կազմված հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հանձնաժողովի անդամներից մեկը նշանակվում է հանձնաժողովի նախագահ:

3. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մաքսային ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը, Կոմիտեի նախագահի տեղակալը և Կոմիտեի այլ աշխատակիցներ:

4. Հարցազրույցի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է Կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:

5. Հանձնաժողովի քարտուղարության աշխատանքներն իրականացնում է Կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:

6. Հարցազրույցի հրավիրվում են՝

1) մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակներում ընդգրկված, մաքսային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին բավարարող 5 ամենաբարձր միավորներ ունեցող բոլոր անձինք, ըստ թեկնածուների ցուցակի բարձրից ցածր հաջորդականության.

2) վերապատրաստում (այդ թվում՝ առաջխաղացման նպատակով) անցած և տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում՝ համաձայն սույն հավելվածի ձև N 1-ի, ներկայացրած անձինք:

7. Եթե սույն հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված անձինք հրաժարվում են մասնակցել հարցազրույցին, ապա հարցազրույցի հրավիրվում են հաջորդաբար ավելի բարձր միավորներ ունեցող անձինք:

8. Հարցազրույցի նպատակն է մաքսային ծառայողի պաշտոնում արդյունավետ գործելու համար մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկված տվյալ պաշտոնի թեկնածուի անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտելը:

9. Անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտվում են թեկնածուի մասնագիտական աշխատանքի փորձառությունը (բացառությամբ՝ կրտսեր պաշտոնների), մաքսային ծառայող դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, մաքսային ծառայությանը վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, պատասխանատվության

զգացում, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և հարկային կամ մաքսային ծառայողի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով:

10. Հարցազրույցից առաջ հարցազրույցի հանձնաժողովի որոշմամբ հարցազրույցի հրավիրված մասնակիցները կարող են Կոմիտեի ղեկավարի կողմից հաստատած կարգով անցնել հոգեբանական թեստավորում:

11. Հարցազրույցին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել հոգեբան:

12. Որպես կանոն, հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին: Հանձնաժողովի որոշմամբ առանձին դեպքերում կարող է անցկացվել նաև մասնակիցների համաժամանակյա հարցազրույց:

13. Հարցազրույցի արդյունքներով հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ յուրաքանչյուր մասնակցի գնահատումը իրականացնում է «դրական» կամ «բացասական» որոշում կայացնելու եղանակով: Ընդ որում, հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ կարող է «դրական» որոշում կայացնել տվյալ պաշտոնին հավակնող բոլոր մասնակիցներից միայն մեկի համար:

14. Յուրաքանչյուր մասնակցի գնահատումն իրականացվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի համար նախատեսված առանձին քվեաթերթիկի միջոցով՝ համաձայն ձև N 2-ի:

15. Հարցազրույցի փուլը հաղթահարած է համարվում այն մասնակիցը, որի համար «դրական» որոշում են կայացրել հանձնաժողովի ավելի շատ թվով անդամներ:

16. Սույն հավելվածի 15-րդ կետով նախատեսված «դրական» որոշումների քանակի հավասարության դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի որոշումը:

17" Հարցազրույցի ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում քվեաթերթիկների ամփոփման արդյունքներով հանձնաժողովը Կոմիտեի ղեկավարին է ներկայացնում եզրակացություն հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ՝ համաձայն սույն հավելվածի ձև N 3-ի՝ նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին:

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարին

_____ից
(դիմողի անուն, հայրանուն, ազգանունը)

_____
(դիմողի բնակության հասցեն)

_____
(դիմողի գրանցման հասցեն)

_____
(դիմողի հեռախոս՝ աշխ.,բնակ.,բջջ., էլ.փոստի հասցե)

_____
(անձնագրի սերիան, համարը կամ նույնականացման
քարտի համարը, երբ և ում կողմից է տրվել)

_____
(հանրային ծառայության համարանիշը)

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի _____ **(ծածկագիր՝** _____) մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող հարցազրույցին:

Տիրապետում եմ համակարգչային հետևյալ ծրագրերին՝

_____

Տիրապետում եմ հետևյալ օտար լեզուներին՝

_____

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

- Անձնագրի (նույնականացման քարտի) պատճեն
- Սոց քարտի (ՀԾՀ) պատճեն
- Դիպլոմ(ների) պատճեն (ներ)
- Աշխատանքային գրքույկի (տեղեկանքի (ների)) պատճեն (ներ)
- Վերապատրաստման ծրագիրը (այդ թվում՝ առաջխաղացման) հաջողությամբ ավարտելու մասին հավաստագրի պատճեն
- _____
- _____

Տեղեկացված եմ «Մաքսային ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով հանրային ծառայողի նկատմամբ նախատեսված սահմանափակումների մասին:

Նախազգուշացված եմ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

«____»_____ _____թ.

Ձև N 2

Քվեաթերթիկ

_____

(պաշտոնի անվանումը և ծածկագիրը)

Մաքսային ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող հարցազրույցի փուլի մասնակից

_____

(անունը, ազգանունը)

Դրական	Բացասական

Հանձնաժողովի անդամ՝ _____ _____

(ստորագրություն) (անունը, ազգանունը)

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հանձնաժողովի եզրակացություն

_____

(պաշտոնի անվանումը և ծածկագիրը)

մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ

h/h	Մասնակցի անունը, հայրանունը, ազգանունը	Հարցազրույցի արդյունքում		
		հնարավոր «դրական» որոշումների քանակը	մասնակցի ստացած «դրական» որոշումների քանակը	մասնակցի ստացած «դրական» որոշումները տոկոսով
1.				
2.				
3.				
4.				
5.				

Հարցազրույցը հաղթահարել է _____

(անունը, հայրանունը, ազգանունը)

Հանձնաժողովի նախագահ՝ _____ (ստորագրություն) _____ (անունը, ազգանունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ (ստորագրություն) _____ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրություն) _____ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրություն) _____ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրություն) _____ (անունը, ազգանունը)

Հավելված 2
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2022 թվականի օգոստոսի 12-ի № 836-Լ հրամանի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Հարցազրույցի ընթացքում հանձնաժողովն առավել ամփոփ տեղեկություններ է ստանում մասնակցի վերաբերյալ, մասնակցին տալիս է հարցեր, որով բացահայտվում են թեկնածուի մասնագիտական աշխատանքի փորձառությունը, մաքսային ծառայող դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, մաքսային ծառայությանը վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, պատասխանատվության զգացում, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և հարկային կամ մաքսային ծառայողի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով:

2. Հանձնաժողովն իրավունք ունի ծանոթանալու մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի արդյունքներն ամփոփող փաստաթղթերին, ինչպես նաև հարցազրույցից առաջ հանձնաժողովի որոշմամբ հոգեբանական թեստավորում անցկացված լինելու դեպքում հոգեբանական թեստավորման արդյունքներին:

3" Հարցազրույցին մասնակցող բոլոր մասնակիցների հետ հարցազրույցն անցկացվում է միևնույն ձևաչափերով:

4. Հարցազրույցի անցկացման ժամանակ օգտագործվում են հետևյալ ձևաչափերը՝

1) Մասնագիտական հարցեր. կոնկրետ առաջադրանքի միջոցով աշխատանքային իրավիճակում մասնակցի կարողությունների, տվյալ խնդրի դրական, բացասական հետևանքների և դրանց արդյունավետ լուծման մասնակցի ներկայացրած հնարավոր տարբերակների գնահատում, հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածության գնահատում,

2) Անձնական հատկանիշներ. բարեվարքություն, վարվեցողություն, պատասխանատվության զգացում, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և հարկային կամ մաքսային ծառայողի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների մասին մասնակցի տեսակետի, վերլուծական մտքի և հաղորդակցության հմտությունների գնահատում (հանձնաժողովի կողմից կարող են օգտագործվել նաև հարցազրույցից առաջ կայացված որոշմամբ նշված հատկանիշները գնահատելու համար անցկացված հոգեբանական թեստավորման գնահատման արդյունքներ՝ առկայության դեպքում):

5. Հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի անդամները մասնակցին հնարավորություն են տալիս ինքնաներկայանալու, ազատ և անկաշկանդ ներկայացնելու իր մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները: Հանձնաժողովի անդամները մասնակցին կարող են տալ հարցեր, մասնակցի տրված պատասխաններից կարող են կատարել անհրաժեշտ վերլուծություններ և եզրահանգումներ:

6. Սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով ներկայացվող առաջադրանքի շրջանակներում հանձնաժողովը մասնակցին կարող է հանձնարարել ստուգել ինչ-որ փաստաթուղթ: Փաստաթղթերը կարող են լինել՝ ինչպես ճիշտ ձևակերպված, այնպես էլ՝

սխալներով: Ստուգման ընթացքում սխալների հայտնաբերումը կամ բացթողումը կարող է վկայել մասնակցի կոմպետենտության մասին:

7. Սույն հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված մասնակցի անձնական հատկանիշները բացահայտելու համար հանձնաժողովը մասնակցին կարող է առաջարկել գրավոր՝ մեկ էջի սահմաններում կամ բանավոր հնարավորինս հակիրճ ներկայացնել մաքսային ծառայող դառնալու շարժառիթն ու ակնկալիքը: